

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաստատելով տնտեսական համագործակցությունը զարգացնելու եւ Կողմերի առետրային ու տնտեսական կապերը ընդլայնելու մտադրությունը,

սույն Համաձայնագրի հիման վրա ընդունելով Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության ներդաշնակության անհրաժեշտությունը պետական եւ (կամ) մունիցիպալ գնումների ոլորտում,

ձգտելով իրականացնել համաձայնեցված քաղաքականություն պետական եւ (կամ) մունիցիպալ գնումների ոլորտում,

համաձայնեցին ստորեւ նշվածի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացությունների սահմանումը

1. Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

1) «գնումներ»՝ պետական եւ մունիցիպալ(առկայության դեպքում) գնումներ՝ պատվիրատուների կողմից բյուջետային միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում եւ այլ գնումներ, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության՝ պետական եւ մունիցիպալ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում այլ միջոցներով, ինչպես նաեւ գնման համաձայնագրերի (պայմանագրերի) կատարման հետ կապված հարաբերություններ.

2) «ինտերնետ պորտալ»՝ գնումների միասնական ինտերնետային պորտալ (միասնական պաշտոնական կայք)՝ յուրաքանչյուր Կողմի ինտերնետ ցանցում կայք (տեղեկատվական համակարգ եւ էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրս), որն ապահովում է մուտքի միասնական վայր գնումների մասին տեղեկությունների եւ նշված տեղեկությունների տեղադրումը, ինչպես

նաեւ միասնական մուտքի վայր էլեկտրոնային ծառայություններին (գնումներին)՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում.

«պատվիրատու»՝ պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին, բյուջետային կազմակերպություն, այդ թվում՝ պետական եւ մունիցիպալ հիմնարկներ, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն գնումներ իրականացնող այլ անձինք. Կողմերն իրավունք ունեն Կողմ հանդիսացող պետության օրենսդրության մեջ նախատեսել սույն Համաձայնագիրը կիրառելու բացառություն պետական եւ մունիցիպալ ունիտար ձեռնարկությունների եւ պետական կամ մունիցիպալ մասնակցությամբ այլ իրավաբանական անձանց կապակցությամբ: Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել գնումների գործընթացի կազմակերպչի ստեղծում (գործառույթ), որի գործունեությունն իրականացվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն.

4) «գնումների մասին տեղեկություններ»՝ ծանուցում, փաստաթղթեր, ծանուցման եւ (կամ) փաստաթղթերի անբաժանելի մասը կազմող պայմանագրի նախագիծ, գնումների ընթացքում կազմված արձանագրություններ, գնման համաձայնագրի (պայմանագրի) մասին տվյալներ, Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ցանկ, ինչպես նաեւ նման համաձայնագրի (պայմանագրի) համար կնքված լրացուցիչ համաձայնագրերի մասին տվյալներ եւ ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների հանձնման-ընդունման ակտերի մասին տվյալներ: Գնումների մասին տեղեկությունները ենթակա են պարտադիր հրապարակման ինտերնետ պորտալում՝ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ծավալով: Յուրաքանչյուր Կողմ գնումների մասին իր պետության օրենսդրության մեջ իրավունք ունի ընդլայնելու սույն Համաձայնագրով նախատեսված՝ Կողմի ինտերնետ պորտալում հրապարակվող գնումների մասին տեղեկությունների ցանկը.

5) «ազգային ռեժիմ»՝ ռեժիմ, որով նախատեսվում է, որ յուրաքանչյուր Կողմ ապահովի, որ Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների նպատակով նման ապրանքներ առաջարկող, աշխատանքներ կատարող եւ ծառայություններ մատուցող մատակարարների ու հնարավոր մատակարարների կողմից Կողմ հանդիսացող պետությունների տարածքում ծագած ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումների իրականացման նպատակով չկիրառվի առավել բարենպաստ ռեժիմ, քան նախատեսվում է իրենց պետության ապրանքների (աշխատանքների, ծառայությունների), նման ապրանքներ առաջարկող, աշխատանքներ կատարող եւ ծառայություններ մատուցող մատակարարների ու հնարավոր մատակարարների

համար. Ապրանքի ծագման երկիրը սահմանվում է ապրանքների ծագման երկրների սահմանման կանոնների համաձայն, որոնք գործում են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում.

6) «էլեկտրոնային առետրային հարթակներ» (էլեկտրոնային հարթակներ)՝ իրավակազմակերպական եւ սեփականության ձեւից անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող եւ Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստացած իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ, որը Կողմ հանդիսացող պետության օրենսդրության համաձայն, ունի էլեկտրոնային առետրային հարթակ (առետրային հարթակ), դրա գործարկման համար անհրաժեշտ ծրագրային եւ սարքավորման միջոցներ եւ (կամ) միջոցներ, որոնք ապահովում են դրա գործարկումը.

7) «հնարավոր մատակարար»՝ հնարավոր մատակարար (կապալառու, կատարող)՝ կազմակերպատիրական ձեւից, սեփականության ձեւից, գտնվելու վայրից կամ կապիտալի առաջացման վայրից ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռներեցը: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի սահմանափակելու Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության մեջ ֆիզիկական անձանց եւ (կամ) պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ բյուջետային կազմակերպությունների, այդ թվում՝ բոլոր Կողմ հանդիսացող պետությունների հիմնարկների կողմից իրականացվող գնումների գործընթացում մասնակցության հնարավորությունը.

8) «մատակարար»՝ մատակարար (կատարող, կապալառու)՝ անձ, որի հետ կնքվել է գնման համաձայնագիրը (պայմանագիրը).

9) «առավել բարենպաստ ռեժիմ»՝ Կողմ հանդիսացող պետությունների տարածքում ծագած ապրանքների (աշխատանքների, ծառայությունների), ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության՝ նման ապրանքներ առաջարկող, աշխատանքներ կատարող եւ ծառայություններ մատուցող մատակարարների կամ հնարավոր մատակարարների նկատմամբ առավել բարենպաստ ռեժիմի կիրառում, քան երրորդ երկրների տարածքում ծագած, ինչպես նաեւ երրորդ պետության՝ նման ապրանքներ առաջարկող, աշխատանքներ կատարող եւ ծառայություններ մատուցող մատակարարների կամ հնարավոր մատակարարների համար.

10) «երրորդ երկրներ»՝ պետություններ, որոնց կառավարությունները սույն Համաձայնագրի մասնակիցներ չեն.

11) «գնումների էլեկտրոնային ձեռնարկ» (ձեռնարկ)՝ գնումների ընթացակարգ, որն իրականացվում է համացանցի, ինտերնետային պորտալի եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակի միջոցով, ինչպես նաեւ ծրագրային ու ապարատային միջոցներով:

12) «էլեկտրոնային առետրային հարթակ» (էլեկտրոնային հարթակ)՝ համացանցում կայք՝ էլեկտրոնային ձեռնարկ (ձեռնարկով) գնումների կատարման համար: Ընդ որում, Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրության մեջ կարող է սահմանվել, որ էլեկտրոնային առետրային հարթակը (էլեկտրոնային հարթակը) կարող է լինել սույն կետի երկրորդ ենթակետում նշված կայքը:

2. Սույն Համաձայնագիրը կիրառելիս, եթե Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության հասկացություններից եւ դրույթներից սույն Համաձայնագրով սահմանված իմաստներից այլ իմաստ չի ենթադրվում, ապա Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրության մոտարկում սույն Համաձայնագրին չի պահանջվում:

Հոդված 2

Համաձայնագրի գործողության ոլորտը

1. Սույն Համաձայնագրի գործողության ոլորտը տարածվում է գնումների ոլորտում առկա հարաբերությունների վրա:

2. Սույն Համաձայնագիրը չի տարածվում Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ պետական գաղտնիք համարվող գնումների վրա:

Հոդված 3

Գնումների ոլորտին ներկայացվող պահանջները

Կողմ հանդիսացող պետության օրենսդրությունը, ինչպես նաեւ գնումների կատարումը պետք է համապատասխանեն սույն Համաձայնագրին եւ բավարարեն հետեւյալ պահանջները՝

1) գնումների ոլորտում հարաբերությունների կարգավորում բացառապես Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն:

2) Կողմ հանդիսացող պետություններում գնումների նպատակով օգտագործվող միջոցների օպտիմալ եւ արդյունավետ օգտագործման ապահովում:

3) ազգային ռեժիմի ապահովում.

4) առավել բարենպաստ ռեժիմի ապահովում.

5) գնումների մասին բաց եւ թափանցիկ տեղեկությունների ապահովում, այդ թվում՝

յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետության կողմից ինտերնետ պորտալի ստեղծելու միջոցով, որը կապահովի անարգել եւ անվճար մուտք գնումների մասին տեղեկություններին եւ կունենա առավելագույն տեղեկությունների որոնման միջոց.

ինտերնետ պորտալում Կողմ հանդիսացող պետության՝ գնումների ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական ակտերը հրապարակելու միջոցով:

6) էլեկտրոնային առետրային հարթակների (էլեկտրոնային հարթակներ) թվի սահմանափակում, որտեղ կարող են իրականացվել գնումները.

7) սույն Համաձայնագրով նախատեսված միջոցներով գնումների իրականացում.

8) հնարավոր մատակարարների կողմից էլեկտրոնային թվային ստորագրության անխոչընդոտ տրամադրման ապահովում՝ էլեկտրոնային ձեւաչափով (ձեւով) իրականացվող գնումների գործընթացում մասնակցելու համար.

9) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությունում, ինչպես նաեւ գնումների պայմաններում մատակարարների եւ հնարավոր մատակարարների նկատմամբ ներկայացվող քանակական ու չկառավարվող պահանջներ ներառելու արգելքի սահմանում, ինչպես նաեւ գնումների գործընթացում հնարավոր մատակարարների ինքնակամ մուտքի արգելքի սահմանում.

10) հնարավոր մատակարարներին գնումներում մասնակցելու թույլտվության մերժման արգելքի սահմանում՝ նման մատակարարների կողմից փաստաթղթեր եւ ապացույցներ չներկայացնելու հիմքերով, որոնց ներկայացնելու պահանջը սահմանված չի եղել գնման ծանուցման մեջ եւ (կամ) փաստաթղթերում.

11) գնումների պայմաններ, այդ թվում՝ գնման համաձայնագրի (պայմանագրի) պայմաններ սահմանելու արգելք, որոնք հանգեցնում են մատակարարների եւ հնարավոր մատակարարների քանակական սահմանափակման.

12) մատակարարների եւ հնարավոր մատակարարների կողմից պայմանագրային պարտավորությունները կատարելուց միակողմանի հրաժարվելու արգելքի սահմանում.

13) պայմանագրային պարտավորությունների կատարման պայմաններում, այդ թվում՝ գնման համաձայնագրում (պայմանագրում) գնային փոփոխություններ կատարելու արգելքի սահմանում, բացառությամբ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Կողմերը ձգտում են իրենց ազգային օրենսդրությունից հանել պայմանագրային պարտավորությունների կատարման պայմաններում, այդ թվում՝ գնման համաձայնագրում (պայմանագրում) գնային փոփոխությունների կատարման հնարավորություն սովոր դրույթները՝ սահմանելով նշված փոփոխությունների թույլատրման համար կոնկրետ դեպքեր: Ընդ որում, չի թույլատրվում գնման համաձայնագրի (պայմանագրի) գնի փոփոխություն՝ պայմանավորված գնաճով, փոխարժեքի եւ ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների շուկայական արժեքի փոփոխություններով, ինչպես նաեւ չի թույլատրվում ապրանքների քանակի (աշխատանքների, ծառայությունների ծավալի) նվազեցում առանց գնման համաձայնագրի (պայմանագրի) գնի համամասնական իջեցման:

14) մրցույթում մասնակցության հայտերի գնահատման չափանիշների, ինչպես նաեւ գնահատման կարգի սահմանման եւ հայտերի համադրման արգելք, որոնք հանգեցնում են հաղթող մասնակցի ոչ օբյեկտիվ եւ (կամ) ոչ կառավարելի որոշման:

15) մատակարարների եւ հնարավոր մատակարարների իրավունքների ու օրինական շահերի ապահովում:

16) գնումների ոլորտում ազգային վերահսկող մարմնի ստեղծում (սահմանում):

17) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման համար պատասխանատվության սահմանում:

18) գնումների ոլորտում մրցակցության խթանում, ինչպես նաեւ կոռուպցիոն եւ այլ չարաշահման դրսեւորումների համար կանխարգելիչ միջոցների ձեռնարկում:

Հոդված 4

Ազգային ռեժիմի ապահովման առանձնահատկությունները

Բացառիկ դեպքերում Կողմերը կարող են 2 տարուց ոչ ավելի ժամանակահատվածով Կողմ հանդիսացող պետության օրենսդրությունում միակողմանի սահմանել ազգային ռեժիմի բացառում:

Ընդ որում, Կողմ հանդիսացող պետության՝ գնումների ոլորտում նորմատիվ-իրավական կարգավորում իրականացնող պետական իշխանության մարմինը կամ գնումների ոլորտում Կողմ հանդիսացող պետության ազգային վերահսկող մարմինը կամ համապատասխան պետության գործադիր մարմնի բարձրագույն մարմինը, որը սահմանում է ազգային ռեժիմի բացառում, նախօրոք, սակայն ոչ այն սահմանելու օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում, գրավոր տեղեկացնում է Մաքսային միության Հանձնաժողովին եւ մյուս Կողմերին նման բացառումներ սահմանելու մասին՝ դրանք սահմանելու անհրաժեշտության հիմնավորմամբ:

Նման ծանուցում ստացած Կողմերը կարող են դիմել ծանուցումն ուղարկած Կողմին՝ առաջարկելով քննարկել սույն հոդվածով սահմանված բացառումների սահմանումը:

Սույն հոդվածի համաձայն բացառումներ սահմանող Կողմը չի կարող մերժել մյուս Կողմին՝ նման քննարկում անցկացնելու համար:

Մաքսային միության հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու Համաձայնագրի ցանկացած Կողմ հանդիսացող պետության կողմից նախատեսված ազգային ռեժիմի բացառումը վերացնելու մասին որոշում՝ Կողմ հանդիսացող պետության կողմից բացառումը սահմանելու մասին նորմատիվ-իրավական ակտն ընդունելու օրվանից մեկ տարվա ընթացքում: Եթե Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է սահմանված ազգային ռեժիմի բացառումը վերացնելու մասին որոշում, Կողմը, որը նախաձեռնել է նման բացառում, ապահովում է երկամսյա ժամկետում բացառումը նախատեսող նորմատիվ-իրավական ակտի անվավեր ճանաչումը: Ընդ որում, Մաքսային միության հանձնաժողովի կողմից ազգային ռեժիմի բացառումը վերացնելու մասին որոշում ընդունելու դեպքում նման ազգային ակտը գործողության մեջ չի մտնում:

Հոդված 5

Գնումների իրականացման եղանակները

1. Գնումներն իրականացվում են հետևյալ եղանակներից որեւէ մեկով՝

1) մրցույթ (բաց),

2) գնային առաջարկների հարցում (գնանշումների հարցում), եթե նախատեսվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ.

3) աճուրդ (բաց),

4) բորսային առևտուր, եթե նախատեսվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ.

5) մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնում, կամ Կողմ հանդիսացող պետության ակտի հիման վրա կոնկրետ գնումների իրականացման առանձնահատկությունների կիրառմամբ գնում, եթե նախատեսվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված գնումները, ինչպես նաև առանց սույն հոդվածի 1-ին կետում նշված ընթացակարգերի իրականացվող գնումներն իրականացվում են 13-րդ հոդվածի եւ 1-ին հավելվածի ցանկի համաձայն:

Հոդված 6

Մատակարարներին եւ հնարավոր մատակարարներին ներկայացվող պահանջները

Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ մատակարարների եւ հնարավոր մատակարարների նկատմամբ սահմանված պահանջները չպետք է հակասեն սույն Համաձայնագրի դրույթներին:

Գնումների գործընթացում հնարավոր մատակարարների մասնակցությունը կարող է սահմանափակվել Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում, Կողմ հանդիսացող պետության՝ անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում ներառված տվյալների հիման վրա, եթե նշված գրանցամատյանի վարումը նախատեսված է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ եւ իրականացվում է Կողմ հանդիսացող պետության իրավասու մարմնի կողմից: Գնումների գործընթացում հնարավոր մատակարարների մասնակցությունը կարող է նաև սահմանափակվել սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածում սահմանված դեպքերում: Գնումների գործընթացում մասնակցության համար հնարավոր մատակարարներից վճարի գանձում չի թույլատրվում, բացառությամբ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել պատվիրատուի՝ գնումների իրականացման ժամանակ հնարավոր մատակարարների կողմից գնումներում մասնակցության հայտերի ապահովման պահանջ, ինչպես նաև գնումների մասին

համաձայնագրի (պայմանագրի) իրականացումն ապահովելու պահանջ սահմանելու իրավունք կամ պարտականություն:

Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումներում մասնակցության հայտերի ապահովման չափը եւ համաձայնագրի (պայմանագրի) կատարման ապահովման չափը: Ընդ որում, գնումներում մասնակցության հայտերի ապահովման չափը չի կարող գերազանցել գնման համաձայնագրի (պայմանագրի) նախնական (առավելագույն) գնի 5 տոկոսը, իսկ գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման ապահովումը՝ գնման համաձայնագրի (պայմանագրի) նախնական (առավելագույն) գնի 30 տոկոսը, բացառությամբ այն դեպքի, երբ գնման պայմանագրով (համաձայնագրով) նախատեսվում է կանխավճարի վճարում: Այդ դեպքում գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման ապահովման չափը պետք է կազմի կանխավճարի չափից ոչ պակաս: Ընդ որում, գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման ապահովման գերազանցված գումարի չափը չի կարող գերազանցել կանխավճարի 30 տոկոսը:

Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանվի գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման ապահովման առնվազն 2 միջոց (եղանակ):

Հոդված 7

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) նկատմամբ պահանջներ

Գնումների մասին փաստաթղթերը կամ գնումների իրականացման ժամանակ այլ փաստաթղթեր չպետք է ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների նկատմամբ պահանջներ պարունակեն, եթե նման պահանջները ենթադրում են մատակարարների եւ հնարավոր մատակարարների քանակի սահմանափակում, բացառությամբ, երբ գնվող ապրանքն անհամատեղելի է պատվիրատուի կողմից օգտագործվող ապրանքների հետ եւ երբ անհրաժեշտ է ապահովել նման ապրանքների փոխգործակցությունը, այդ թվում՝ չի թույլատրվում սահմանել պահանջներ ապրանքն արտադրողի նկատմամբ:

Հոդված 8

Մրցույթ

1. Պատվիրատուն գնումն իրականացնում է էլեկտրոնային ձեռագրով (ձեռով) իրականացվող մրցույթի եղանակով, այդ թվում՝ նախատեսելով մրցույթում հայտերը ներկայացնելը էլեկտրոնային փաստաթղթերի միջոցով:

Մրցույթի հաղթող ճանաչվում է հնարավոր մատակարարը, որը գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման ամենալավ պայմաններն է առաջարկել:

Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել մրցույթի իրականացման առանձնահատկություններ՝ կապված հնարավոր մատակարարների մասին տեղեկությունների գաղտնիության պահանջի պահպանման անհրաժեշտության հետ, մինչև մրցույթի անցկացման ավարտը:

2. Մրցույթն իրականացվում է հետևյալ պահանջների հաշվառմամբ՝

1) մրցույթային փաստաթղթերի հաստատումը.

2) մրցույթային հանձնաժողովի կազմի հաստատումը.

3) ինտերնետ պորտալում մրցույթի անցկացման եւ մրցույթի փաստաթղթերի տեղադրումը՝ Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ պակաս, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից 20 օր առաջ: Եթե պատվիրատուի կողմից կատարվում են փոփոխություններ՝ մրցույթի իրականացման եւ (կամ) մրցույթային փաստաթղթերի մասին ծանուցման մեջ, ապա մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու ժամկետը պետք է երկարաձգվի այնպես, որ ինտերնետ պորտալում փոփոխությունների կատարման մասին ծանուցումը հրապարակելու (տեղադրելու) օրվանից մինչև մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու ժամկետի ավարտի օրն ընկած ժամկետը կազմի առնվազն 15 օր: Ընդ որում, գնման համաձայնագրի (պայմանագրի) առարկայի փոփոխություն չի թույլատրվում.

4) ինտերնետ պորտալում պատվիրատուի կողմից մրցույթային փաստաթղթերի դրույթների վերաբերյալ պարզաբանումները եւ նման պարզաբանումների հրապարակումը (տեղադրումը)՝ Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ծավալով, ժամկետներում եւ կարգով.

5) մրցույթում մասնակցության հայտը ներկայացնելը էլեկտրոնային փաստաթղթի միջոցով.

6) մրցույթի հանձնաժողովի կողմից մրցույթում մասնակցության հայտերի բացումը եւ (կամ) դրանց դիտարկումը, որպեսզի որոշվի հայտերի համապատասխանությունը Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ եւ մրցույթային փաստաթղթերով սահմանված պահանջների հետ, ինչպես նաեւ մրցույթում մասնակցության հայտերի բացման եւ (կամ) հնարավոր մատակարարներին մրցույթում մասնակցության թույլատրելու համապատասխան արձանագրությունների հրապարակումը (տեղադրումը) ինտերնետ պորտալում եւ (կամ) յուրաքանչյուր հնարավոր մատակարարին մրցույթի հայտերի բացման եւ (կամ) նման մատակարարի մրցույթին մասնակցության թույլատրելու (մասնակցությունը մերժելու) մասին արդյունքները ժամանակին ծանուցումը՝ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն.

7) հնարավոր մատակարարների գնահատումը, մրցույթում մասնակցության թույլատրված հնարավոր մատակարարների կողմից ներկայացված հայտերի (առաջարկների), այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերի միջոցով գնային առաջարկների համադրումը, ինչպես նաեւ մրցույթում հաղթողի որոշումը, եւ մրցույթի արդյունքները ինտերնետ պորտալում հրապարակումը (տեղադրումը).

8) հնարավոր մատակարարի, որի հետ կնքվում է գնման համաձայնագիրը (պայմանագիրը), մրցույթի մասնակցության հայտում եւ մրցույթային փաստաթղթերում ներկայացված պայմաններով, մրցույթի արդյունքների հիման վրա գնման համաձայնագրի (պայմանագրի) կնքումը Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կամ մրցույթի անվավեր ճանաչումը Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում: Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ նաեւ սահմանվում են պատվիրատուի եւ հնարավոր մատակարարի միջեւ գնման համաձայնագրի (պայմանագրի) կնքման կարգն ու հերթականությունը՝ ելնելով հնարավոր մատակարարի հետ համաձայնագրի (պայմանագրի) կնքման անհրաժեշտությունից, որն առաջարկել է գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման լավագույն պայմանները, ինչպես նաեւ պատվիրատուի գործողությունների կարգը՝ մրցույթն անվավեր ճանաչելու դեպքում:

Հոդված 9

Գնային առաջարկների հարցում (գնանշում)

1. Գնային առաջարկների հարցմամբ (գնանշմամբ) գնումներն իրականացվում են այն դեպքում, երբ նման եղանակը սահմանված է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին

օրենսդրությամբ՝ Կողմ հանդիսացող պետության գնումների մասին օրենսդրությամբ համաձայն սահմանված պայմանագրային նախնական (առավելագույն) գնի չգերազանցմամբ, այդ թվում՝ 2-րդ հավելվածի համաձայն ցանկով կատարվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումների ժամանակ: Բացառիկ դեպքերում, Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ կարող են սահմանվել գնային առաջարկների հարցմամբ (գնանշումների) եղանակով գնումների դեպքերը՝ անկախ գնման համաձայնագրի (պայմանագրի) նախնական (առավելագույն) գնից:

2. Գնային առաջարկների հարցմամբ (գնանշմամբ) հաղթող ճանաչվում է հավանական մատակարարը, որը ներկայացրել է գնման պայմանագրի (համաձայնագրի) ամենացածր գինը Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն:

3. Գնային առաջարկների հարցմամբ (գնանշումների հարցմամբ) գնումների իրականացման դեպքում, ինտերնետ պորտալում հրապարակվում է (տեղադրվում է) դրա անցկացման մասին ծանուցում Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ քիչ, քան գնային առաջարկների հարցման (գնանշումների հարցման) մասնակցության հայտ ներկայացնելու ժամկետի ավարտից հետո 4 աշխատանքային օրերի ընթացքում:

4. Կողմերից յուրաքանչյուրը ձգտում է գնային առաջարկների հարցման (գնանշումների հարցման) եղանակից անցում կատարել էլեկտրոնային ձեռագրով (ծեւով) աճուրդների անցկացման եղանակին:

Հոդված 10

Աճուրդ

1. Աճուրդի միջոցով իրականացվող գնումներն իրականացվում են եւ էլեկտրոնային ձեռագրով (ծեւով)՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածով նախատեսված ցանկով: Ընդ որում, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի գնումների մասին իր պետության օրենսդրության մեջ նախատեսելու աճուրդի միջոցով գնվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ավելի ընդլայնված ցանկ:

Աճուրդում հաղթող ճանաչվում է հնարավոր մատակարարը, որը գնման համաձայնագրի (պայմանագրի) կատարման ամենալավ պայմաններն է առաջարկել:

2. Աճուրդում մասնակցության նպատակով հնարավոր մատակարարները պետք է առնվազն 3 տարի պարտադիր հավաստագրում անցնեն ինտերնետ պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն:

3. Աճուրդն իրականացվում է հետեւյալ պահանջների հաշվառմամբ՝

1) աճուրդի մասին փաստաթղթերի հաստատումը.

2) աճուրդի հանձնաժողովի կազմի հաստատումը.

3) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն ինտերնետ պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ) աճուրդի իրականացման մասին ծանուցման ու աճուրդի մասին փաստաթղթերի տեղադրումը, սակայն ոչ ուշ, քան աճուրդում մասնակցության հայտերը ներկայացնելու ժամկետի ավարտի օրվանից 20 օր հետո: Եթե պատվիրատուի կողմից կատարվում են փոփոխություններ՝ աճուրդի իրականացման եւ (կամ) աճուրդի փաստաթղթերի մասին ծանուցման մեջ, ապա աճուրդում մասնակցության հայտերը ներկայացնելու ժամկետը պետք է երկարաձգվի այնպես, որ ինտերնետային պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ) փոփոխությունների կատարման մասին ծանուցումը հրապարակվելու (տեղադրվելու) օրվանից մինչեւ աճուրդում մասնակցության հայտերը ներկայացնելու ժամկետի ավարտի օրն ընկած ժամկետը կազմի առնվազն 15 օր: Ընդ որում, գնման համաձայնագրի (պայմանագրի) առարկայի փոփոխություն չի թույլատրվում. Եթե Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսվում է գնման համաձայնագրի (պայմանագրի) նախնական գին, որի դեպքում հնարավոր է իրականացնել աճուրդը սեղմ ժամկետներում, Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է սահմանվել սույն կետով նախատեսված աճուրդի իրականացման ժամկետից ավելի կարճ ժամկետ.

4) պատվիրատուի կողմից աճուրդի փաստաթղթերի դրույթների վերաբերյալ պարզաբանումները եւ նման պարզաբանումների հրապարակումը (տեղադրումը) ինտերնետ պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ծավալով եւ կարգով.

5) աճուրդում մասնակցության հայտը ներկայացնելը էլեկտրոնային փաստաթղթի միջոցով ինտերնետ պորտալում եւ(կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ)՝ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն.

6) աճուրդի հանձնաժողովի կողմից աճուրդում մասնակցության հայտերի դիտարկումը, որպեսզի որոշեն հայտերի համապատասխանությունը Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ եւ աճուրդի փաստաթղթերով սահմանված պահանջներին՝ մինչեւ աճուրդի ավարտը հնարավոր մատակարարների մասին տեղեկությունների գաղտնիության պահանջի պահպանմամբ (ընդ որում՝ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ եւ աճուրդի փաստաթղթերով սահմանված պահանջների բավարարման մասով հայտերի դիտարկումն իրականացվում է աճուրդից հետո)։

7) ինտերնետ պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ) յուրաքանչյուր հնարավոր մատակարարին աճուրդում նման մատակարարի մասնակցության թույլատրման (մերժման) մասին ծանուցման, ինչպես նաեւ աճուրդում մասնակցության հայտերի դիտարկման արձանագրությունների հրապարակումը (տեղադրումը) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն։

8) աճուրդի իրականացումը՝ գնման համաձայնագրի (պայմանագրի) մեկնարկային (առավելագույն) գնի իջեցման միջոցով։ Եթե աճուրդի իրականացման ժամանակ համաձայնագրի (պայմանագրի) գինը իջնում է մինչեւ զրո, ապա գնման համաձայնագիր (պայմանագիր) կնքելու իրավունքը համար աճուրդը, եթե դա նախատեսված է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ, շարունակվում է գնման համաձայնագրի (պայմանագրի) գնի բարձրացման միջոցով։

9) ինտերնետ պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առետրային հարթակում (էլեկտրոնային հարթակ) աճուրդի արձանագրության հրապարակումը (տեղադրումը) Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն։

10) հնարավոր մատակարարի, որի հետ կնքվում է գնման համաձայնագիրը (պայմանագիրը), աճուրդում մասնակցության հայտում եւ աճուրդի փաստաթղթերում ներկայացված պայմաններով, աճուրդի արդյունքների եւ նման հնարավոր մատակարարի կողմից առաջարկված գնի հիման վրա գնման համաձայնագրի (պայմանագրի) կնքումը Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կամ աճուրդի անվավեր ճանաչումը Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում։ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նաեւ սահմանվում են պատվիրատուի եւ հնարավոր մատակարարի միջեւ գնման համաձայնագրի (պայմանագրի) կնքման կարգն ու հերթականությունը՝ ելնելով հնարավոր մատակարարի հետ համաձայնագրի (պայմանագրի) կնքման անհրաժեշտությունից, որն առաջարկել է գնման

համաձայնագրի (պայմանագրի) ամենացածր գինը, ինչպես նաև պատվիրատուի գործողությունների կարգը՝ մրցույթն անվավեր ճանաչելու դեպքում:

Հոդված 11

Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջներ

Հանձնաժողովի անդամները (այդ թվում՝ մրցույթային, աճուրդային եւ դրույքաչափային) չեն կարող լինել ֆիզիկական անձինք, որոնք անձամբ հետաքրքրված են գնումների արդյունքներով (այդ թվում՝ ֆիզիկական անձինք, որոնք դիմում են ներկայացրել մրցույթում, աճուրդում եւ գնանշումների հարցմամբ մասնակցության համար), մրցույթում, աճուրդում կամ գնանշումների հարցմամբ մասնակցության հայտ ներկայացրած հավանական մատակարարների աշխատողները կամ ֆիզիկական անձինք, որոնց վրա կարող են ներազդել հավանական մատակարարները (այդ թվում՝ ֆիզիկական անձինք, որոնք հավանական մատակարարների մասնակիցներն են (բաժնետերերն են), նրանց կառավարման մարմինների աշխատողները եւ հնարավոր մատակարարների վարկատուն), ինչպես նաև գնումների ոլորտում վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք, որոնք գնումների բնագավառում իրականացնում են ուղղակի վերահսկողություն:

Հոդված 12

Բորսային առևտրի եղանակով իրականացվող գնումներ

Բորսային ապրանքների գնումները կարող են իրականացվել ապրանքային բորսայում Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն: Այդ դեպքում, Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանված լինի ապրանքային բորսաների թվի սահմանափակում (կամ սահմանված լինի մեկ ապրանքային բորսա), որտեղ կարող են իրականացվել նման գնումներ, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված ապրանքների գնումներ: Այն ապրանքը, որի գնումը կարող է իրականացվել ապրանքային բորսայում, սահմանվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

Հողված 13

Մեկ աղբյուրից (միակ մատակարարից (կատարողից, կապալառուից)) գնումներ կատարելը՝ առանց սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ընթացակարգի անցկացման, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետության ակտի հիման վրա կոնկրետ գնումների կատարման առանձնահատկությունների կիրառմամբ

Այն դեպքում, երբ առանց սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ընթացակարգի անցկացման, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետության ակտի հիման վրա կոնկրետ գնումների կատարման առանձնահատկությունների կիրառմամբ մեկ աղբյուրից (միակ մատակարարից (կատարողից, կապալառուից)) գնումներ կատարելը նախատեսված է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ, նման գնումներն իրականացվում են սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նախատեսված դեպքերում:

Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում սահմանված ցանկում լրացումներ կատարելու անհրաժեշտության, ինչպես նաև սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի 26-րդ կետով նախատեսված ակտի ընդունման անհրաժեշտության մասին Կողմ հանդիսացող պետության կողմից որոշում ընդունելու դեպքում, Կողմ հանդիսացող պետության պետական իշխանության մարմինն իրականացնում է գնումների բնագավառի նորմատիվ-իրավական կարգավորում, կամ Կողմ հանդիսացող պետության գնումների բնագավառի ազգային վերահսկող մարմինը կամ համապատասխան Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինը նախօրոք, սակայն ոչ ուշ, քան դրանք ընդունելու օրվանից 30 օրացուցային օր հետո, գրավոր տեղեկացնում է Մաքսային միության Հանձնաժողովին եւ Կողմերից յուրաքանչյուրին:

Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի 11-րդ եւ 12-րդ կետերով սահմանված ակտի ընդունման դեպքում, Կողմ հանդիսացող պետության պետական իշխանության մարմինն իրականացնում է գնումների բնագավառի նորմատիվ-իրավական կարգավորում, կամ Կողմ հանդիսացող պետության գնումների բնագավառի ազգային վերահսկող մարմինը կամ համապատասխան Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինը, որն ընդունել է այդ ակտը, պարտավոր են տեղեկացնել Մաքսային միության Հանձնաժողովին եւ Կողմերին դրա մասին այն ընդունելու օրվանից 30 օրվա ընթացքում:

Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում սահմանված ցանկում լրացումների կատարումը, ինչպես նաև սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի 11-րդ, 12-րդ եւ 26-րդ կետերով նախատեսված ակտերի ընդունումը կարող են չեղարկվել սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ազգային ռեժիմի բացառումը չեղարկելու մասով՝ Կողմ հանդիսացող

պետության կողմից այն ընդունելու օրվանից 1 տարվա ընթացքում: Ընդ որում, սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում սահմանված ցանկի կրճատումը, ինչպես նաև սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի 11-րդ, 12-րդ եւ 26-րդ կետերով սահմանված ակտերի չեղարկումը կարող են կատարվել Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության մեջ յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետության կողմից միակողմանի ձեւով:

Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի 11-րդ, 12-րդ եւ 26-րդ կետերով սահմանված ակտերի ընդունումն իրականացվում է բացառիկ դեպքերում: Նման ակտերի գործողության ժամկետը կազմում է ոչ ավելի, քան 2 տարի, բացառությամբ այն դեպքերի, երբ գնումներով աշխատանքների եւ ծառայությունների կատարման արտադրական պարբերաշրջանի տեւողությունը կազմում է 2 տարուց ավելի:

Յուրաքանչյուր Կողմ իր պետության՝ գնումների մասին օրենսդրության մեջ իրավունք ունի սահմանելու սույն Համաձայնագրի 1-ին հավելվածով սահմանված գնումների իրականացման կարգը:

Հոդված 14

Գնման համաձայնագիրը (պայմանագիրը)

Գնման համաձայնագիրը (պայմանագիրը) պետք է բովանդակի բոլոր կողմերի պատասխանատվության պարտադիր պայմանները՝ գնման նման համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Գնման համաձայնագրում (պայմանագրում) պետք է սահմանվի վճարման կարգը, ինչպես նաև պատվիրատուի կողմից գնման արդյունքի ընդունման կարգը՝ նման համաձայնագրով (պայմանագրով) սահմանված քանակի, լրակազմության (կոմպլեկտայնության), ծավալի եւ որակի համապատասխանության պահանջների համաձայն:

Կողմ հանդիսացող պետության ինտերնետ պորտալում հրապարակվում է (տեղադրվում է) գնման համաձայնագրերի (պայմանագրերի) գրանցամատյանը, այդ թվում՝ գնման համաձայնագրերի (պայմանագրերի) վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ի լրումն նման համաձայնագրերի՝ (պայմանագրերի) կնքված լրացուցիչ համաձայնագրերի մասին տեղեկությունները եւ գնումների արդյունքների հանձնման-ընդունման ակտերի մասին

տեղեկությունները, որոնց ցանկը սահմանվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

Կողմերը ձգտում են անցում կատարել գնման համաձայնագրերի (պայմանագրերի) կնքման էլեկտրոնային եղանակին, ինչպես նաև ներառել գնման համաձայնագրերը (պայմանագրերը), լրացուցիչ համաձայնագրերը, վճարման եւ գնումների արդյունքների հանձնման-ընդունման ակտերի մասին տեղեկությունները գնման համաձայնագրերի (պայմանագրերի) գրանցամատյանում:

Հոդված 15

Անբարեխիղճ մատակարարների գրանցամատյան

1. Յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետության իրավասու մարմին կարող է կազմել եւ վարել անբարեխիղճ մատակարարների գրանցամատյան, որտեղ ներառվում են Կողմ հանդիսացող տվյալ երկրի կողմից անբարեխիղճ ճանաչված մատակարարների, հնարավոր մատակարարների եւ այլ անձանց մասին տեղեկություններ:

2. Անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանը կազմվում եւ լրացվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն, ինչպես նաև հրապարակվում է (տեղադրվում է) տվյալ Կողմի ինտերնետ պորտալում:

3. Անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում համապատասխան փաստերի առկայության դեպքում ներառվում են պարտադիր ապացույցներ՝

1) գնման համաձայնագիրը (պայմանագիրը) կնքելուց խուսափած հնարավոր մատակարարների.

2) իրենց հետ կնքված գնման համաձայնագրով (պայմանագրով) ամրագրված պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած մատակարարների մասին:

4. Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել Կողմերի անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում տվյալ Կողմի գնումների մասով անբարեխիղճ ճանաչված այլ անձանց մասին տեղեկությունների ներառում:

5. Անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանը կազմվում է սույն հոդվածի 3-րդ կետով նախատեսված ապացույցների (հաստատված փաստերի) հաստատման դեպքում,

դատարանի եւ (կամ) ազգային վերահսկող մարմնի որոշման հիման վրա՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրության համաձայն:

Սույն հոդվածով նախատեսված ապացույցները ներառվում են անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետով, սակայն ոչ ավելի, քան 2 տարի ժամկետով:

6. Կողմ հանդիսացող պետությունների՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել Կողմ հանդիսացող պետության պատվիրատուի՝ գնումներին մասնակցություն թույլ տալու իրավունք կամ պարտականություն՝ ելնելով տվյալ մեկ պետության անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում ներառված ապացույցներից:

7. Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ կարող են նախատեսվել Կողմ հանդիսացող պետության պատվիրատուի՝ գնումներին մասնակցության թույլ տալու իրավունք (կամ համապատասխան պարտականություն)՝ ելնելով բոլոր մյուս պետությունների անբարեխիղճ մատակարարների գրանցամատյաններում ներառված ապացույցներից:

8. Այն անձը, որի մասին փաստերը ներառված են անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում, իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու տվյալ գրանցամատյանում ներառված լինելու փաստը:

Հոդված 16

Գնումներում մասնակցության ժամանակ անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը

Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման դեպքերի զգուշացման, վերհանման եւ կանխարգելման ուղղությամբ միջոցներ:

Սույն հոդվածի համաձայն գնումների բնագավառում իրավունքների եւ օրինական շահերի ապահովման ծավալը որոշվում է Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

Գնումների բնագավառում անձանց իրավունքների եւ օրինական շահերի ապահովման, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Կողմերից յուրաքանչյուրը, իր

պետության օրենսդրության համաձայն, ստեղծում է (սահմանում է) ազգային վերահսկող մարմին, որի իրավասության մեջ են մտնում՝

գնումների բնագավառում վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ ստուգումներն անցկացնելու միջոցով.

պատվիրատուների, գնումների կազմակերպիչների, էլեկտրոնային առետրային հարթակների (էլեկտրոնային հարթակներ) օպերատորների, ինտերնետ պորտալների (ինչպես նաև համաձայնագրերի (պայմանագրերի) գրանցամատյանի) օպերատորների, առետրային բորսաների, հանձնաժողովների գործունեության (անգործության) եւ գնումների իրականացման ժամանակ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությունը խախտող այլ անձանց կապակցությամբ ստացված բողոքների եւ դիմումների ուսումնասիրումը: Ընդ որում, յուրաքանչյուր հնարավոր մատակարար, անկախ գնումների գործընթացում մասնակցության հայտ ներկայացնելու փաստից, իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուների, գնումների կազմակերպիչների, էլեկտրոնային առետրային հարթակների (էլեկտրոնային հարթակներ) օպերատորների, ինտերնետ պորտալների (ինչպես նաև համաձայնագրերի (պայմանագրերի) գրանցամատյանի) օպերատորների, առետրային բորսաների, հանձնաժողովների եւ գնումների իրականացման ժամանակ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրությունը խախտող այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որը տեղի է ունեցել մինչեւ գնումների գործընթացում մասնակցության հայտը ներկայացնելու ժամկետի ավարտը,

Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման դեպքերի զգուշացումը եւ վերհանումը, ինչպես նաև նշված խախտումների վերացման համար միջոցների ձեռնարկումը, այդ թվում՝ Կողմ հանդիսացող պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման դեպքերի վերացման վերաբերյալ պարտադիր կատարման հանձնարարական տալու եւ նման խախտումների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցով.

անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանի վարումը Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում:

Հոդված 17

Համաձայնագրի կատարումը

1. Սույն Համաձայնագրի կատարումն իրականացվում է փուլերով՝

1-ին փուլ (Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության համար)՝ մինչև 2012 թվականի հունվարի 1-ը յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետության օրենսդրության մեջ փոփոխությունների կատարում՝ յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետության օրենսդրությունը սույն Համաձայնագրին համապատասխանեցնելու նպատակով, սույն Համաձայնագրին համապատասխան էլեկտրոնային եղանակով գնումների իրականացման գործընթացն ապահովող տեղեկատվական համակարգերի ներդրում եւ Ռուսաստանի Դաշնության ու Բելառուսի Հանրապետության համար ազգային ռեժիմի ներդրում:

2-ին փուլ (Ղազախստանի Հանրապետության համար)՝ մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը Կողմ հանդիսացող պետության օրենսդրության մեջ փոփոխությունների կատարում՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրությունը սույն Համաձայնագրին համապատասխանեցնելու նպատակով, սույն Համաձայնագրին համապատասխան էլեկտրոնային եղանակով գնումների իրականացման գործընթացն ապահովող տեղեկատվական համակարգերի ներդրում .

3-րդ փուլ (Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի համար)՝ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը բոլոր Կողմ հանդիսացող պետությունների համար ազգային ռեժիմի ներդրում:

2. Յուրաքանչյուր Կողմ յուրաքանչյուր փուլի ավարտման մասին անհապաղ տեղեկացնում է Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդին (Մաքսային միության բարձրագույն մարմին):

3. Եթե կողմերից որեւէ մեկը չի կատարում Համաձայնագրի կատարման հետ կապված պարտավորությունը, մյուս կողմերն իրավունք ունեն դիմելու Մաքսային միության հանձնաժողով՝ տվյալ հարցը Մաքսային միության հանձնաժողովի նիստում քննարկելու պահանջով: Քննարկման արդյունքում, Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է հետեյալ որոշումներից որեւէ մեկը՝

1) կատարման պարտավորության խախտման փաստի բացակայություն,

2) Համաձայնագրի կատարման պարտավորության խախտման փաստի ընդունում եւ Կողմի կողմից՝ վերհանված խախտման վերացման անհրաժեշտություն:

4. Եթե սույն հոդվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված որոշումն ընդունելու պահից 2 ամիսը լրանալու դեպքում Կողմը, որի առնչությամբ ընդունվել է համապատասխան որոշումը, չի կատարում Մաքսային միության որոշումը, ապա յուրաքանչյուր մյուս Կողմ իրավունք ունի միակողմանի ընդունելու սույն հոդվածի 5-րդ կետում նախատեսված պատասխան միջոցներ:

5. Կողմերն իրավունք ունեն սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունները չտարածելու սույն Համաձայնագիրը չկատարող Կողմի (Կողմերի) վրա՝ դրա մասին անհապաղ ծանուցելով մյուս կողմերին եւ Մաքսային միության հանձնաժողովին:

Հոդված 18

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի կատարման հետ կապված Կողմերի միջեւ վեճերը լուծվում են առաջին հերթին շահագրգիռ կողմերի միջեւ քննարկումների եւ (կամ) բանակցությունների միջոցով, իսկ վեճի Կողմերից մեկի կողմից մյուս կողմին՝ դրանք իրականացնելու վերաբերյալ գրավոր պաշտոնական խնդրանքն ուղարկելուց հետո 1 տարվա ընթացքում համաձայնության չգալու դեպքում, յուրաքանչյուր կողմ կարող է փոխանցել այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 19

Հավելվածի կարգավիճակը եւ փոփոխություններ կատարելու կարգը

1. Կողմերի համաձայնությամբ, սույն Համաձայնագրում եւ դրա հավելվածում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

2. Եթե Կողմ հանդիսացող պետության նորմատիվ իրավական ակտով միակողմանի ձեւով սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նախատեսված ցանկում կատարվել են լրացումներ, եւ Մաքսային միության հանձնաժողովը սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածով սահմանված կարգով չի ընդունում նման նորմատիվ իրավական ակտի չեղարկման մասին որոշում, ապա նման լրացումն ինքնաբերաբար համարվում է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում կատարված փոփոխություն, եւ առանձին արձանագրությամբ ձեւակերպում չի պահանջվում: Սույն Համաձայնագրի 1-ին հավելվածով նախատեսված ցանկում սույն կետով սահմանված կարգով արված լրացումների դեպքում, ավանդապահն անմիջապես դրա մասին տեղեկացնում է բոլոր Կողմերին:

Հոդված 20

Եզրափակիչ դրույթներ

КонсультантПлюс: ծանոթագրություն

Տեղեկատվական բազա ներառվել է «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածություն ձեւավորող միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի թիվ 9 որոշումը:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի կողմից կառավարությունների ղեկավարների մակարդակով «ավանդապահի կողմից բոլոր Կողմ հանդիսացող պետությունների կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգի կատարման վերաբերյալ ծանուցումն ստանալու մասին ավանդապահի մոտ տեղեկությունների առկայության դեպքում սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու մասին» որոշում ընդունելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը բաց է Մաքսային միության անդամ դարձած այլ պետությունների անդամակցության համար:

Սույն Համաձայնագիրը չի խոչընդոտում Կողմ հանդիսացող պետությունների կողմից գնումների բնագավառում սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող այլ պետությունների հետ միջազգային պայմանագրերը կնքելը:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահպանվում է Եվրասիական տնտեսական ընկերակցության ինտեգրացիոն կոմիտեում, որը, լինելով սույն Համաձայնագրի ավանդապահը, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի իր վավերացված օրինակը:

Ավանդապահը սույն Համաձայնագիրը ստորագրած Կողմերից յուրաքանչյուրին կուղարկի Համաձայնագրի վավերացված օրինակը:

(ստորագրություններ)

**ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՄԵԿ ԱՂԲՅՈՒՐԻՑ ԿԱՄ ՄԻԱԿ ՄԱՏԱԿԱՐԱՐԻՑ (ԿԱՏԱՐՈՂԻՑ,
ԿԱՊԱԼԱՌՈՒԻՑ), ԿԱՄ ԿՈՂՄԻ ԱԿՏԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿՈՆԿՐԵՏ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՌԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
(ՄՈՒՆԻՑԻՊԱԼ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ԿԵՏՈՒՄ ՆՇՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ՑԱՆԿ**

I. Գնումներ

1. Ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղու, ջերմամատակարարման, գազամատակարարման ծառայություններ, բացառությամբ հեղուկ գազի իրացման ծառայությունների, ինժեներա-տեխնիկական ապահովման ցանցերի միացում՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրության համաձայն կարգավորվող գներով (սակագներով), էներգամատակարարման կամ էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի հետ էլեկտրական էներգիայի առքուվաճառքի ծառայություններ, ինչպես նաև բնական մենաշնորհների գործունեության ոլորտին վերաբերող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումներ

2. Մշակութային արժեքների, այդ թվում՝ թանգարանային իրերի եւ թանգարանային հավաքածուների, ինչպես նաև հազվագյուտ եւ արժեքավոր հրատարակումների, ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի մատակարարում՝ ներառյալ պատմական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակություն ունեցող օրինակները, որոնք նախատեսված են պետական թանգարանային, գրադարանային, արխիվային հիմնադրամների, կինո-, լուսանկարչական հիմնադրամների եւ այլ նմանատիպ հիմնադրամների համալրման համար

3. Մոբիլիզացիոն նախապատրաստական աշխատանքներ

4. Աշխատանքներ ու ծառայություններ, որոնց կատարումն ու մատուցումը կարող է իրականացվել բացառապես գործադիր իշխանության մարմինների կողմից՝ նրանց լիազորությունների կամ նրանց ենթակա գերատեսչական պետական հիմնարկների, պետական ունիտար ձեռնարկություններին համապատասխան, որոնց համապատասխան լիազորությունները սահմանվում են Կողմ հանդիսացող պետության իրավական ակտերով

5. Որոշակի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի (արտակարգ իրավիճակների տեղայնացման եւ (կամ) հետեւանքների վերացման), վթարի, շտապ բուժօգնության միջամտության անհրաժեշտության դեպքում, որի կապակցությամբ գնումների ժամանակի ծախս պահանջող այլ միջոցների կիրառումն աննպատակ է

6. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերումը քրեակատարողական համակարգի հիմնարկների եւ քրեակատարողական համակարգի ձեռնարկությունների կողմից, որոնք իրականացնում են այդպիսի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների արտադրումը, կատարումը եւ մատուցումը

7. Գնումներ, որոնք ճանաչվել են չկայացած, գնումների ընթացակարգերի արդյունքներով Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում

8. Կապի ծառայություններ երկրի պաշտպանության կարիքների, պետության անվտանգության եւ իրավակարգի ապահովման համար

9. Գնումների սահմանային գումարը (կամ սահմանային եռամսյակային կամ տարեկան ծավալը), որոնք կարող են սահմանվել Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ, որոնց դեպքում թույլատրվում է իրականացնել գնումներ մեկ աղբյուրից (միակ մատակարարին (կատարողից, կապալառուից)), ընդ որում՝ նշված չափը չպետք է կրի անհատական բնույթ (սույն Համաձայնագրի Կողմերը ձգտում են նվազագույնին հասցնել նշված շեմը՝ հնարավոր մատակարարների մուտքը գնումներին առավելագույնս ընդլայնելու նպատակով)

10. Սպառազինության եւ ռազմական տեխնիկայի մատակարարման համար պատվերի տեղաբաշխումը՝ Կողմ հանդիսացող պետության օրենսդրության համաձայն

11. Կոնկրետ գնում հնարավոր մատակարարից, որը որոշվել է Կողմ հանդիսացող պետության Նախագահի հրամանագրով կամ կարգադրությամբ

12. Կոնկրետ գնում հնարավոր մատակարարից, որը որոշվել է Կողմ հանդիսացող պետության պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից՝ Կողմ հանդիսացող պետության Նախագահի որոշմամբ կամ հանձնարարությամբ

13. Որոշակի հեղինակների գրականության եւ արվեստի ստեղծագործության ձեռքբերում, բացառությամբ վարձույթի նպատակով կինոնախագծերի ձեռքբերման դեպքերի, կոնկրետ կատարողների կատարմամբ եւ կոնկրետ արտադրողների ձայնագրվածքներ այն դեպքում, եթե

միակ անձին են պատկանում այդպիսի ստեղծագործությունների, կատարումների եւ ձայնագրվածքների բացառիկ իրավունքները

14. Բաժանորդագրումը որոշակի պարբերականների եւ էլեկտրոնային հրատարակումների, ինչպես նաեւ որոշակի հեղինակների տպագիր եւ էլեկտրոնային հրատարակումների գնում, էլեկտրոնային հրատարակումներին մուտքի ապահովման գծով ծառայությունների մատուցում՝ նման տպագիր եւ էլեկտրոնային հրատարակությունների հրատարակիչների պետական եւ մունիցիպալ կրթական հիմնարկների, պետական եւ մունիցիպալ գրադարանների, պետական գիտական կազմակերպությունների գործունեությունն ապահովելու նպատակով այն դեպքում, եթե նշված հրատարակիչներին են պատկանում նման հրատարակություններն օգտագործելու բացառիկ իրավունքները

15. Կենդանաբանական այգու, թատրոնի, կինոթատրոնի, համերգի, կրկեսի, թանգարանի, ցուցահանդեսի եւ սպորտային միջոցների մասնակցության պատվերի տեղաբաշխում

16. Ցուցահանդեսների, սեմինարների, համաժողովների, նիստերի, ֆորումների, գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների նյութերի ձեռքբերում, ինչպես նաեւ նման միջոցառումներում մասնակցությունների համար վճարումների կատարում

17. Ֆիզիկական անձանցից դասախոսական ծառայությունների գնում

18. Թատրոնի, համերգային գործունեություն իրականացնող հիմնարկի, այդ թվում՝ համերգային խմբի (պարային խմբի), երգչախմբային կոլեկտիվի, նվագախմբի, անսամբլի), հեռուստառադիոհաղորդման հիմնարկի, կրկեսի, թանգարանի, մշակույթի տան, մշակույթի պալատի կամ ակումբի կողմից՝ գրականության կամ արվեստի ստեղծագործությունների ստեղծման համար պատվերի տեղաբաշխում, որոնք ներառված են Կողմերից յուրաքանչյուրի պետության՝ պետական ու մունիցիպալ գնումների մասին օրենսդրության համաձայն միակ մատակարարի մոտ պատվերի տեղաբաշխման կամ գնումների ցանկի մեջ՝ կոնկրետ ֆիզիկական անձի կամ կոնկրետ ֆիզիկական անձանց՝ սցենարի հեղինակի, արտիստ-կատարողի, բալետմեյստերի, հեռուստա- եւ ռադիոձրագրի հաղորդավարի, դիզայների, դիրիժորի, թատերագրի, մարզիչի, կրկեսային համարների ինժեների, կոմպոզիտորի, կոնցերտմեյստերի, լիբրետիստի, կինո-, տեսա-, ձայնագրման օպերատորի, գրողի, բանաստեղծի, ռեժիսորի, դասուսույցի, քանդակագործի, պարուսույցի, երգչախմբի ղեկավարի եւ նկարչի մոտ

19. Կապիտալ շինարարության օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման հեղինակային վերահսկողության, կապիտալ շինարարության օբյեկտների շինարարության,

վերակառուցման եւ կապիտալ վերանորոգման հեղինակային վերահսկողության ծառայությունների գնումը համապատասխան հեղինակների կողմից

20. Կողմ հանդիսացող պետությունների ժողովուրդների մշակութային ժառանգության (պատմական եւ մշակութային հուշարձանների) օբյեկտների պահպանման աշխատանքների տեխնիկական ու հեղինակային վերահսկողության անցկացման պատվերի տեղաբաշխում

21. Ծառայությունների գնում, որոնք կապված են աշխատակցին՝ ծառայողական գործուղման (դեպի գործուղման վայր եւ հետ վերադարձի ճանապարհաճախսը, բնակելի տարածքի վարձույթ, տրանսպորտային սպասարկում, սննդի ապահովում) ուղարկելու հետ, ինչպես նաեւ ներկայացուցչական ծախսերի կատարում

22. Այնպիսի ծառայությունների պատվերի տեղաբաշխում, որոնք կապված են օտար երկրների ղեկավարների, օտարերկրյա պետությունների կառավարությունների ղեկավարների, միջազգային կազմակերպությունների, խորհրդարանական պատվիրակությունների, կառավարական պատվիրակությունների, օտարերկրյա պատվիրակությունների (հյուրանոցային, տրանսպորտային ապահովման, համակարգչային սարքավորումների շահագործման, սնուցման ապահովման) ղեկավարների այցերի ապահովման հետ

23. Մեկնման միջոցառումների ապահովման հետ կապված ծառայությունների պատվերի տեղաբաշխում, որոնք անցկացվում են Կողմ հանդիսացող պետության նախագահի կողմից, օրենսդրական ժողովի պալատների, Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից (հյուրանոցային, տրանսպորտային ապահովման, համակարգչային սարքավորումների շահագործման, սնուցման ապահովման)

24. Սպորտային գույքի եւ սարքավորումների, սպորտային հանդերձանքի մատակարարման պատվերի տեղաբաշխում, որոնք անհարժեշտ են օլիմպիական եւ պարալիմպիկ սպորտաձեւերով Կողմ հանդիսացող պետությունների սպորտային հավաքականների նախապատրաստման համար, ինչպես նաեւ օլիմպիական ու պարալիմպիկ խաղերին Կողմ հանդիսացող պետությունների սպորտային հավաքականների մասնակցության համար

25. Պատիժը կատարող հիմնարկների պատվերների տեղաբաշխում միակ մատակարարի մոտ, պետական կարիքների համար ապրանքների մատակարարման նպատակով, իրավաբանական անձանց հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա դատապարտյալներին աշխատանքի տեղավորելու համար ապրանքների արտադրման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման նպատակով այդպիսի հիմնարկների կողմից հումքի, նյութերի եւ համալրող իրերի ձեռքբերման համար, պայմանով, որ

նշված հիմնարկների կողմից հումքի, նյութերի եւ համալրող իրերի ձեռքբերումը, որոնք անհրաժեշտ են ապրանքների արտադրման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար, իրականացվում է նշված քաղաքացիաիրավական պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին

26. Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի նորմատիվային իրավական ակտով՝ կոնկրետ պատվերների առանձնահատկությունների սահմանում

27. Նյութական արժեքներ, որոնք իրացվում են պետական եւ մոբիլիզացիոն նյութական պահուստներից

28. Որոշակի մատակարարի մոտ գնումներ իրականացնող պատվիրատուի, կազմակերպչի, իրավասու կազմակերպության մոտ այդպիսի ապրանքների լրացուցիչ քանակի պահանջմունքի առաջացում, ընդ որում՝ լրացուցիչ գնվող ապրանքի քանակը չի կարող գերազանցել պայմանագրով նախատեսված ապրանքների 10 տոկոսը (լրացուցիչ մատակարարվող ապրանքի միավորի գինը պետք է որոշվի որպես պայմանագրի սկզբնական գնի՝ պայմանագրում նախատեսված այդպիսի ապրանքի քանակի վրա բաժանման արդյունք)

II. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից), կամ Կողմի ակտի հիման վրա կոնկրետ գնման կատարման առանձնահատկությունների կիրառմամբ, ինչպես նաեւ առանց սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ընթացակարգերի անցկացման գնումների դեպքերի ցանկ Ռուսաստանի Դաշնության համար

29. Բազմաբնակարանային շենքի կառավարման ծառայությունների գնման իրականացումը բազմաբնակարան շենքի սեփականատերերի կողմից տարածքի ընտրության հիման վրա կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, կառավարող կազմակերպության բնակարանային օրենսդրության համաձայն, եթե տարածքները բազմաբնակարան շենքում գտնվում են մասնավոր սեփականության եւ պետական սեփականության կամ մունիցիպալ սեփականության ներքո

30. Մեկ կամ մի քանի ոչ բնակելի տարածքների տեխնիկական ապահովման, պահպանման եւ սպասարկման ծառայությունների գնման իրականացում, որոնք փոխանցվել են պետական կամ մունիցիպալ պատվիրատուին անհատույց օգտագործման համար, այն դեպքում, եթե այդ ծառայությունները մատուցվում են անհատույց օգտագործման եւ (կամ) գործառական կառավարման տրված տարածքների շենքում գտնվող ոչ բնակելի տարածք օգտագործող այլ անձի կամ անձանց

III. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից), կամ Կողմի ակտի հիման վրա կոնկրետ գնման կատարման առանձնահատկությունների կիրառմամբ, ինչպես նաև առանց սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ընթացակարգերի անցկացման գնումների դեպքերի ցանկ Ղազախստանի Հանրապետության համար

31. Ամենօրյա եւ (կամ) ամենշաբաթյա պահանջմունքի գնումների իրականացման անհրաժեշտությունը գնումների արդյունքների ամփոփման եւ գնումների մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամանակաշրջանի համար այն դեպքում, եթե նման գնումն իրականացվում է Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված տարվա 1-ին ամսվա ընթացքում: Այս դեպքում գնման ծավալը չի կարող գերազանցել ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների քանակը, որն անհրաժեշտ է պատվիրատուի պահանջմունքի բավարարման համար գնման անցկացման ժամկետի ընթացքում, սակայն ոչ ավելի, քան 2 ամիս

32. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու համար ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում

33. Բնօգտագործման իրավունքի ձեռքբերում

34. Արտասահմանում աշխատակիցների նախապատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման ծառայությունների ձեռքբերում

35. Վարկանշային գործակալությունների ծառայությունների, ֆինանսական ծառայությունների ձեռքբերում ստացողների (ֆիզիկական անձանց) հաշիվներին աշխատավարձի մուտքագրումների համար ծառայությունների մատուցման մասով այն դեպքում, եթե ֆիզիկական անձն ինքնուրույն որոշել է վարկային (բանկային) կազմակերպությունը, ինչպես նաև ֆիզիկական անձանց կանխիկ դրամական միջոցներով գործարքների մասով

36. Կույր եւ թույլ տեսողությամբ քաղաքացիների մասնագիտացված գրադարանների ծառայությունների ձեռքբերում

37. Արժեթղթերի կամ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերում

38. Ընտրությունների հետ կապված ծառայությունների ձեռքբերում, որոնց՝ սույն Կանոնակարգով սահմանված միջոցներով գնումների ցանկը նախատեսված է գնումների մասին Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ

39. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որն իրականացվում է Կողմերի միջազգային պայմանագրերի համաձայն, ըստ Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության գերագույն մարմնի կողմից հաստատված ցանկի, ինչպես նաեւ ներդրումային նախագծերի իրացման շրջանակներում, որոնք ֆինանսավորվում են միջազգային ընկերությունների կողմից, որոնց անդամ է Կողմը

40. Կողմ հանդիսացող պետության ազգային արժույթի թղթադրամների եւ մետաղադրամների դիզայնի, պատրաստման, պահպանման, առաքման աշխատանքների եւ ծառայությունների, ինչպես նաեւ դրանց դիզայնի ու պատրաստման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում

41. Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինն, Կողմ հանդիսացող պետության Ազգային Բանկին պետությունների, պետությունների կառավարությունների, միջազգային եւ պետական կազմակերպությունների, օտարերկրյա ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների եւ հիմնադրամների կողմից (որոնց գործունեությունը կրում է բարեգործական եւ միջազգային բնույթ) անհատույց հիմքով տրվող դրամաշնորհների գումարների, ինչպես նաեւ այդ դրամաշնորհների համաֆինանսավորման համար հատկացվող գումարների օգտագործման հետ կապված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում այն դեպքում, երբ դրանց տրամադրված համաձայնագրերում նախատեսված են ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերման այլ ընթացակարգեր

42. Ֆիզիկական անձի համար պետական կրթական պատվերի հետ կապված ծառայությունների ձեռքբերում (այն դեպքում, եթե ֆիզիկական անձն ինքնուրույն է ընտրել կրթական կազմակերպությունը)

43. Կողմերի պետությունների քաղաքացիների՝ արտասահմանում բուժման ծառայությունների, ինչպես նաեւ նրանց փոխադրման եւ ուղեկցման ծառայությունների ձեռքբերում

44. Մտավոր սեփականության առարկա հանդիսացող ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերում այն անձանցից, որոնք ձեռք բերվող ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ բացառիկ իրավունքների են տիրապետում

45. Կողմ հանդիսացող պետությունների արտասահմանյան հիմնարկների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաեւ նրանց անունից

գործող պատվիրատուների առանձնացված ստորաբաժանումների կողմից, օտարերկրյա պետության տարածքում իրենց գործունեությունն ապահովելու նպատակով

46. Միջազգային տեղեկատվական կազմակերպությունների կողմից տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցում

47. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են դրամավարկային գործունեություն, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության Ազգային հիմնադրամի կառավարման գծով գործունեություն իրականացնելու համար

48. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են Կողմ հանդիսացող պետության Նախագահի, այլ պաշտպանվող անձանց կացության համար նախատեսված օբյեկտների եւ պաշտպանվող անձանց պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության Նախագահի գործունեության տեղեկատվական սպասարկման եւ տեսարխիվի ձեւավորման ծառայությունների ձեռքբերում

49. Միջազգային առեւտրային արբիտրաժներում եւ արտասահմանյան դատական մարմիններում պետության կամ պատվիրատուների շահերը պաշտպանելու եւ ներկայացնելու գծով խորհրդատվական ու իրավաբանական ծառայությունների ձեռքբերում

50. Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված անձից ծառայությունների ձեռքբերում՝ ըստ գույքի հավատարմագրային կառավարման

51. Կողմ հանդիսացող պետության օրենքներով սահմանված կոնկրետ անձից ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում (այդ թվում՝ այն դեպքում, երբ անձը պետական մենաշնորհ է եւ սահմանված է որպես պետական մենաշնորհ՝ Կողմ հանդիսացող պետության օրենքով, ինչպես նաեւ այն դեպքում, երբ ձեռք են բերվում աշխատանքներ կամ ծառայություններ, որոնց կատարումը կամ մատուցումը կարող է իրականացվել բացառապես գործադիր իշխանության մարմինների կողմից, համաձայն դրանց լիազորությունների կամ դրանց ենթակա պետական հիմնարկների, պետական (ունիտար) ձեռնարկությունների, իրավաբանական անձանց կողմից, պետությանը պատկանող (մասնակցության բաժնեմասերի) քվեարկող բաժնետոմսերի հարյուր տոկոսով, որոնց (բոլոր վերը թվարկված կազմակերպությունների) համապատասխան լիազորությունները սահմանվում են Կողմ հանդիսացող պետության նորմատիվ իրավական ակտերով

52. Վիճակագրական դիտարկումների տվյալների մշակման ծառայությունների ձեռքբերում

53. Դատական կատարածոների կողմից սակարկություններում (աճուրդներում) իրացվող գույքի (ակտիվների) ձեռքբերումը՝ համաձայն յուրաքանչյուր Կողմ հանդիսացող պետության կատարողական վարույթի մասին օրենսդրության, որոնք անցկացվում են Կողմ հանդիսացող պետության սնանկության մասին օրենսդրության, հողային օրենսդրության համաձայն եւ պետական գույքի սեփականաշնորհմամբ

54. Կողմ հանդիսացող պետության օրենքների համապատասխան փաստաբանների կողմից ծառայությունների մատուցման դիմաց վճարումից ազատված անձանց մատուցվող ծառայությունների ձեռքբերում

55. Պետական նյութական պահուստի ապրանքների ձեռքբերումը շուկայի վրա կարգավորող ազդեցություն գործելու համար Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում

56. Մոբիլիզացիոն պահուստի նյութական արժեքների պահպանման ծառայությունների ձեռքբերում այն կազմակերպությունից, որը կատարում է տվյալ մոբիլիզացիոն պատվերը

57. Տիեզերագնացների նախապատրաստման եւ թռիչքների իրականացման կազմակերպման ծառայությունների ձեռքբերում Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում

58. Մասնագիտացված ավիավերանորոգման ձեռնարկություններում ավիացիոն տեխնիկայի վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

59. Պետական եւ գերատեսչական պարզեւտրումների ու դրանց նկատմամբ փաստաթղթերի, Ղազախստանի Հանրապետության Խորհրդարանի պատգամավորի կրծքանշանի եւ դրա նկատմամբ փաստաթղթի, պետական հավատարմական դրոշմների, անձնագրերի (այդ թվում՝ ծառայողական եւ դիվանագիտական), Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների անձի հաստատման, Ղազախստանի Հանրապետությունում օտարերկրացու կացության քարտի, քաղաքացիություն չունեցող անձի վկայականի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի պատրաստման ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաեւ Ղազախստանի Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից հաստատված ցանկով Ղազախստանի Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից սահմանված մատակարարներից հատուկ պաշտպանության աստիճան պահանջող տպագիր արտադրանքի ձեռքբերում

IV. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից), կամ Կողմի ակտի հիման վրա կոնկրետ գնման կատարման առանձնահատկությունների կիրառմամբ, ինչպես նաև առանց սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված ընթացակարգերի անցկացման գնումների դեպքերի ցանկ Բելառուսի Հանրապետության համար

60. Ներքին գործերի նախարարության քրեակատարողական համակարգի կազմակերպությունների, բուժարտադրական (աշխատանքային) բուժական պրոֆիլակտիկ հիմնարկների, Առողջապահության նախարարության բուժարտադրական (աշխատանքային) արհեստանոցների սեփական արտադրության (ենթակատարողների չներգրավման դեպքում) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերում, ինչպես նաև այնպիսի կազմակերպություններից (ենթակատարողների չներգրավման դեպքում), որոնցում հաշմանդամների թիվը կազմում է «Բելխուդոժպրոմիսլի» պետական արտադրատեսչության միավորման եւ դրա կազմի մեջ մտնող կազմակերպությունների (ենթակատարողների չներգրավման դեպքում) աշխատակիցների ցուցակային թվի ոչ պակաս, քան 50 տոկոսը, գեղարվեստական ստեղծագործական արտադրանքի գնումների համար

61. Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերում պետական մարմիններին եւ այլ կազմակերպությունների նախագահական, կառավարական, օպերատիվ եւ հատուկ կապի այլ տեսակներով ապահովելու նպատակով, Կողմ հանդիսացող պետություններում եւ Կողմ հանդիսացող պետությունների սահմաններից դուրս գտնվող ընկերություններում այդպիսի կապի անվտանգությունը կազմակերպելու եւ ապահովելու նպատակով՝ տեղեկատվությունը գաղտնի ստանալու համար

62. Բռնագրավված, կալանքի տակ գտնվող, բռնագանձված կամ պետության շահույթի վերածված գույքի ձեռքբերում այլ եղանակներով, այդ թվում՝ այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում է կատարվել՝ հարկային պարտավորությունը չկատարելու եւ չվճարված տույժերի հաշվին

63. Բազմաբնակարանային շենքի կառավարման ծառայությունների գնում բազմաբնակարանային շենքում տարածքի սեփականատերերի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընտրության հիման վրա կառավարող կազմակերպության բնակարանային օրենսդրության համաձայն, եթե բազմաբնակարանային շենքում տարածքները գտնվում են մասնավոր կամ պետական, կամ էլ մունիցիպալ սեփականության ներքո

64. Մեկ կամ մի քանի ոչ բնակելի տարածքների տեխնիկական ապահովման, պահպանման եւ սպասարկման ծառայությունների գնման իրականացում, որոնք փոխանցվել են պետական կամ

մունիցիպալ պատվիրատուին անհատույց օգտագործման համար, այն դեպքում, եթե այդ ծառայությունները մատուցվում են անհատույց օգտագործման եւ (կամ) գործառական կառավարման տրված տարածքների շենքում գտնվող ոչ բնակելի տարածք օգտագործող այլ անձի կամ անձանց

65. Ամենօրյա եւ (կամ) ամենշաբաթյա պահանջմունքի գնումների իրականացման անհրաժեշտությունը գնումների արդյունքների ամփոփման եւ գնումների մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամանակաշրջանի համար այն դեպքում, եթե նման գնումն իրականացվում է Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ սահմանված տարվա 1-ին ամսվա ընթացքում Այս դեպքում գնման ծավալը չի կարող գերազանցել ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների թիվը, որն անհրաժեշտ է՝ պատվիրատուի պահանջմունքի բավարարման համար գնման անցկացման ժամկետի ընթացքում, սակայն 2 ամսից ոչ ավելի

66. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու համար

67. Բնօգտագործման իրավունքի ձեռքբերում

68. Արտասահմանում աշխատակիցների նախապատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման ծառայությունների ձեռքբերում

69. Վարկանիշային գործակալությունների ծառայությունների, ֆինանսական ծառայությունների ձեռքբերում ստացողների (ֆիզիկական անձանց) հաշիվներին աշխատավարձի մուտքագրումների համար ծառայությունների մատուցման մասով այն դեպքում, եթե ֆիզիկական անձն ինքնուրույն որոշել է վարկային (բանկային) կազմակերպությունը, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց կանխիկ դրամական միջոցներով գործարքների մասով

70. Արժեթղթերի կամ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերում

71. Ընտրությունների հետ կապված ծառայությունների ձեռքբերում, որոնց՝ սույն Կանոնակարգով սահմանված միջոցներով գնումների ցանկը նախատեսված է գնումների մասին Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությամբ

72. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որն իրականացվում է Կողմերի միջազգային պայմանագրերի համաձայն, ըստ Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության գերագույն մարմնի կողմից հաստատված ցանկի, ինչպես նաեւ

ներդրումային նախագծերի իրացման շրջանակներում, որոնք ֆինանսավորվում են միջազգային ընկերությունների կողմից, որոնց անդամ է Կողմը

73. Կողմ հանդիսացող պետության ազգային արժույթի թղթադրամների եւ մետաղադրամների դիզայնի, պատրաստման, պահպանման, առաքման աշխատանքների եւ ծառայությունների, ինչպես նաեւ դրանց դիզայնի ու պատրաստման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում

74. Կողմ հանդիսացող պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինն, Կողմ հանդիսացող պետության Ազգային Բանկին պետությունների, պետությունների կառավարությունների, միջազգային եւ պետական կազմակերպությունների, օտարերկրյա ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների եւ հիմնադրամների կողմից (որոնց գործունեությունը կրում է բարեգործական եւ միջազգային բնույթ) անհատույց հիմքով տրվող դրամաշնորհների գումարների, ինչպես նաեւ այդ դրամաշնորհների համաֆինանսավորման համար հատկացվող գումարների օգտագործման հետ կապված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում այն դեպքում, երբ դրանց տրամադրման համաձայնագրերում նախատեսված են ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերման այլ ընթացակարգեր

75. Կողմեր հանդիսացող պետությունների քաղաքացիների՝ արտասահմանում բուժման ծառայությունների, ինչպես նաեւ նրանց փոխադրման եւ ուղեկցման ծառայությունների ձեռքբերում

76. Մտավոր սեփականության առարկա հանդիսացող ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերում այն անձանցից, որոնք ձեռք բերվող ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ բացառիկ իրավունքների են տիրապետում

77. Միջազգային տեղեկատվական կազմակերպությունների կողմից տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցում

78. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են դրամավարկային գործունեություն, ինչպես նաեւ Կողմ հանդիսացող պետության Ազգային հիմնադրամի կառավարման գծով գործունեություն իրականացնելու համար

79. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են Կողմ հանդիսացող պետության Նախագահի, այլ պաշտպանվող անձանց կացության համար նախատեսված օբյեկտների եւ պաշտպանվող անձանց պաշտպանությունն ու անվտանգությունն

ապահովելու համար, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետության Նախագահի գործունեության տեղեկատվական սպասարկման եւ տեսաարխիվի ձեւավորման ծառայությունների ձեռքբերում

80. Միջազգային առետրային արբիտրաժներում եւ արտասահմանյան դատական մարմիններում պետության կամ պատվիրատուների շահերի պաշտպանման եւ ներկայացման գծով խորհրդատվական եւ իրավաբանական ծառայությունների ձեռքբերում

81. Վիճակագրական դիտարկումների տվյալների մշակման ծառայությունների ձեռքբերում:

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՁԵՎԱԶԱՓՈՎ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՑԱՆԿ**

1. Գյուղատնտեսական արտադրանք, որսորդական զբաղմունքի արտադրանք, ծառայություններ գյուղատնտեսության եւ որսորդության մեջ, բացի կենդանի կենդանիներից, որսորդության, վայրի կենդանիների եւ թռչունների բազմացման ու բուծման հետ կապված արտադրանքից եւ ծառայություններից, ինչպես նաեւ վայրի կենդանիների ու թռչունների որսորդության ու բազմացման արտադրանքից
2. Անտառային տնտեսության եւ փայտամթերման արտադրանք, ծառայություններ անտառային տնտեսության եւ փայտամթերման համար
3. Ձկնորսության, ձկնաբուծարանների եւ ձկնային ֆերմաների արտադրանք, ծառայություններ՝ կապված ձկնորսության հետ
4. Քարածուխ եւ լիգնիտ (գորշ ածուխ), տորֆ
5. Հում նավթ եւ բնական գազ, ծառայություններ դրանց հանույթի վերաբերյալ՝ բացի հետախուզական աշխատանքներից
6. Մետաղական հանքանյութեր
7. Քար, կավ, ավազ եւ հանքային հումքերի այլ տեսակներ
8. Պարենային մթերքներ եւ ըմպելիքներ
9. Ծխախոտային արտադրանք եւ ծխախոտային արդյունաբերության այլ արտադրանք
10. Տեքստիլ արտադրանք
11. Հագուստ, մորթի եւ մորթուց պատրաստված արտադրանք՝ բացառությամբ մանկական հագուստի
12. Կաշի եւ արտադրանք կաշվից, փոկային եւ թամբագործական արտադրանք, կոշկեղեն
13. Փայտանյութ, արտադրանք փայտանյութից, խցանակեղեղից, փափուկ ծղոտից եւ հյուսվածեղեն՝ բացի կահույքից

14. Ցեյուրդա, թուղթ, սովարաթուղթ եւ դրանցից ստացված արտադրանք

15. Պոլիգրաֆիական եւ տպագիր արտադրանք, բացի գովազդային նյութերից, նկարներից, գծագրերից, տպագրված լուսանկարներից, հուշանվերների եւ նվերների հավաքածուներից (նոթատետրերից եւ գրառումների տետրերից), ընտրություններում եւ հանրաքվեներում քվեարկելու համար քվեաթերթիկներից

16. Կոքսի վառարանների արտադրանք

17. Նավթավերամշակման արտադրանք, նավթավերամշակման եւ պիրոլիզի գազ, գազի վերամշակման գործարանների արտադրանք

18. Օրգանական եւ անօրգանական սինթեզի արտադրանք

19. Ռետինից եւ պլաստմասսայից արտադրանք

20. Այլ ոչ մետաղական հանքային արտադրանք, բացի ապակե տնտեսա-կենցաղային ապրանքներից եւ ինտերիերների համար, ինչպես նաեւ կավագործական, ոչ շինարարական, ոչ հրակայուն արտադրանքից

21. Մետաղագործական արդյունաբերության արտադրանք

22. Մետաղագործական արտադրանք, բացի մեքենաներից եւ սարքավորումից (բացի միջուկային ռեակտորներից)

23. Մեքենաներ եւ սարքավորում, որոնք ներգրավված չեն այլ խմբավորումներում, բացի զենքից, զինամթերքից եւ դրանց մասերից, ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեցող պայթուցիկ սարքերից եւ պայթուցիկ նյութերից

24. Գրասենյակային, հաշվապահական եւ հաշվիչ-էլեկտրոնային տեխնիկա

25. Էլեկտրաշարժիչներ եւ էլեկտրատեխնիկական սարքավորում, որոնք ներգրավված չեն այլ խմբավորումներում

26. Սարքավորում եւ ապարատուրա ռադիոյի, հեռուստատեսության եւ կապի համար

27. Բժշկական սարքավորում եւ ապարատուրա, չափման միջոցներ, լուսանկարչական եւ կինոապարատուրա, ժամացույց

28. Ավտոմեքենաներ, կցասայլեր եւ կիսակցասայլեր, թափքեր ավտոմեքենաների համար, մեքենաների մասեր եւ պատկանելիքներ, ավտոտնակների սարքավորում

29. Այլ տրանսպորտային միջոցներ, բացի առեւտրային եւ մարդատար նավերից, ռազմանավերից, օդային եւ տիեզերական թռչող սարքերից, թռչող սարքերի սարքավորումներից ու մասերից

30. Պատրաստի արտադրանք, բացի ոսկերչական արտադրանքից եւ դրանց հետ առնչվող արտադրանքի, երաժշտական գործիքների, խաղերի եւ խաղալիքների, աշխատանքային գործընթացներում ուսուցանելու համար սարքավորման, ուսումնական ձեռնարկների եւ դպրոցական սարքավորման, գեղարվեստական արհեստների արտադրանքների, արվեստի գործերի եւ կոլեկցիաների առարկաների, ցուցադրական կինոժապավենի, մարդու, կենդանու մազի, սինթետիկ նյութերից եւ դրանցից արտադրանքներ

31. Թափոններ եւ մետաղի թափոն, որը հարմար է որպես նոր հումք օգտագործելու համար

32. Բնական ջուր եւ սառույց

33. Շինարարական ծառայություններ եւ շինարարության օբյեկտներ, ներառյալ կապիտալ եւ ընթացիկ վերանորոգումը, բացի հատկապես վտանգավոր, տեխնիկապես բարդ կապիտալ շինարարության օբյեկտներից, արհեստական ճանապարհային կառույցներից, որոնք ներառված են ավտոմոբիլային ճանապարհների կազմի մեջ այն դեպքում, եթե տվյալ բացառությունները սահմանված են գնումների մասին Կողմ հանդիսացող պետության օրենսդրությամբ եւ Կողմ հանդիսացող պետության օրենսդրության մեջ տրվում է այդպիսի օբյեկտների սպառիչ ցանկը

34. Ծառայություններ առեւտրի, ավտոմեքենաների եւ մոտոցիկլետների տեխնիկական սպասարկման վերաբերյալ

35. Մեծածախ եւ կոմիսիոն առեւտրի ծառայություններ՝ բացի ավտոմեքենաների եւ մոտոցիկլետների առեւտրի ծառայություններից

36. Մանրածախ առեւտրի ծառայություններ

37. Հյուրանոցների եւ ռեստորանների ծառայություններ

38. Ցամաքային տրանսպորտի ծառայություններ՝ բացի երկաթուղային տրանսպորտի ծառայություններից, մետրոպոլիտենի ծառայություններից, խողովակաշարով փոխադրման ծառայություններից

39. Ջրային տրանսպորտի ծառայություններ

40. Օժանդակ եւ լրացուցիչ տրանսպորտային ծառայություններ, տուրիզմի եւ էքսկուրսիաների ոլորտում ծառայություններ, բացի ճանապարհորդությունների բյուրոների եւ

տուրիստական գործակալությունների ծառայություններից, զբոսաշրջիկներին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ այլ ծառայություններից

41. Կապ, բացի սուրհանդակային ծառայություններից, բացառությամբ ազգային փոստի ծառայությունների, էլեկտրական կապի ծառայությունների

42. Ֆինանսական միջնորդությանը վերաբերող ծառայություններ, բացի ապահովագրության եւ կենսաթոշակային ապահովության, պարտատոմսային փոխառության կազմակերպմանը վերաբերող ծառայություններից

43. Ծառայություններ, որոնք ֆինանսական միջնորդության նկատմամբ օժանդակ են համարվում՝ բացառությամբ գնահատման ծառայությունների

44. Անշարժ գույքի հետ կապված ծառայություններ

45. Ծառայություններ գրասենյակների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների եւ դրանց հետ համատեղ օգտագործվող երկրորդական սարքավորման համար օրգտեխնիկայի տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման վերաբերյալ

46. Շենքերի կարգի բերման ծառայություններ

47. Փաթեթավորման ծառայություններ

48. Կոյուղու, թափոնների վերացման, սանիտարական մշակման ծառայություններ եւ նույնանման ծառայություններ

49. Բնակ-կոմունալ տնտեսության ծառայություններ՝ բացի վարսավիրանոցների, կոսմետիկ սրահների եւ բուժական կոսմետիկ կազմակերպությունների ծառայություններից, հուղարկավորությունների, թաղումների եւ դիակիզման կազմակերպման ծառայություններից

50. Վերամշակող արդյունաբերության մեջ գործունեության հետ կապված ծառայություններ, բացի այս ցանկում չընդգրկված կոքսի արտադրության մեջ, նավթի եւ միջուկային վառելիքի վերամշակման արտադրանքի հետ կապված ծառայություններից, կահույքի արտադրանքի ծառայություններից, սարքավորման տեխնիկական սպասարկման ծառայություններից